**«Արդշինբանկ» ՓԲԸ բաժնետերերի 2020 թվականի ապրիլի 30-ի տարեկան ընդհանուր ժողովը թիվ 2020-1-2 Լ որոշմամբ որոշել է՝**

1. «Արդշինբանկ» ՓԲԸ 2019 թվականի ֆինանսական հաշվետվությունների համաձայն 9,601,157,000 (ինը միլիարդ վեց հարյուր մեկ միլիոն մեկ հարյուր հիսունյոթ հազար) ՀՀ դրամ գումարի «Արդշինբանկ» ՓԲԸ զուտ շահույթը (հարկերի նվազեցումից և «Արդշինբանկ» ՓԲԸ «Ա» դասի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց միջանկյալ շահութաբաժինների վճարումից հետո) բաշխել հետևյալ կերպ՝

1) 480,057,850 (չորս հարյուր ութսուն միլիոն հիսուն յոթ հազար ութ հարյուր հիսուն) ՀՀ դրամի չափով, որը կազմում է 9,601,157,000 (ինը միլիարդ վեց հարյուր մեկ միլիոն մեկ հարյուր հիսունյոթ հազար) ՀՀ դրամ զուտ շահույթի 5% (հինգ տոկոսը), կատարել պահուստային ֆոնդի (գլխավոր պահուստի) համալրում,

2) «Արդշինբանկ» ՓԲԸ Խորհրդի 30.04.2019 թվականի թիվ 06/19-05 Լ, 05.08.2019 թվականի թիվ 08/19-01 Լ և 12.02.2020 թվականի թիվ 01/20-02 Լ որոշումների հիման վրա «Ա» դասի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց բաշխվել և վճարվել են միջանկյալ 140,861,944.70 ՀՀ դրամի չափով շահութաբաժիններ,

3) մնացած գումարն ուղղել «Արդշինբանկ» ՓԲԸ «Նախորդ տարիների շահույթ/վնաս» հաշվեկշռային հաշվին:

2. «Արդշինբանկ» ՓԲԸ 2019 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով «Արդշինբանկ» ՓԲԸ տեղաբաշխված սովորական բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ չվճարել:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: